

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 30/1

ք.Երևան

1 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ N1502566 վարչական ակտի դեմ Կ.Բատիկյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Կ.Բատիկյանի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ N1502566 վարչական ակտի դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը բերել է դիմում-բողոք բերելու իրավասություն չունեցող անձը:

Քննարկվող դեպքում դիմում-բողոքը վերաբերվում է Աստղիկ Մազմանյանի նկատմամբ կազմված ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ N1502566 վարչական ակտին, սակայն դիմում-բողոքը բերվել է դիմում-բողոք բերելու իրավասություն չունեցող անձի՝ Կ.Բատիկյանի կողմից: Մասնավորապես, դիմում-բողոքին կից ներկայացված չէ Կ.Բատիկյանն Աստղիկ Մազմանյանի ներկայացուցիչը հանդիսանալու մասին ապացույցը (լիազորագիրը):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Կ.Բատիկյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ